

Գ Ր Ա Խ Օ Ս ՈՒ Թ Ի Ի Ն

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ»։ Աշխարհաբար
թարգմանեց և լուսաբանեց ԽՈՐԵՆ Ժ. Վ. ՍՏԵՓԱՆԷ։ Ս. Պետեր-
բուրգ, տպարան Ի. Ն. Սկորոխոգովի. 1889 թ., քառաձալ, տառ
№ 12, մթ+351+328 երես։ Գինն է 1 ռ. 50 կոպեկ։

Ոչ մի հայերէն երկ և ոչ մի հայ
հեղինակ արժանացել են այն հե-
տաքրքրութեան, ուսումնասիրու-
թեան և գիտնական քննադատու-
թեան եւրոպական գիտութեան և
գրականութեան կողմից, որչափ մեր
պատմաւար Մովսէս Խորենացին և
իւր «Հայոց Պատմութիւնը»։ Արդէն
XVIII դարու սկզբից եւրոպան ծա-
նօթացել էր լատիններէն թարգմա-
նութեամբ արդէն նշանաւոր գործի
հետ։ Անուհետեւ մի շարք թարգմա-
նութիւններ ֆրանսերէն, իտալերէն,
գերմաներէն և ռուսերէն լեզուներ-
ում, Սէն-Մարտէնի, Լանզուալի,
Պետերմանի, Գուտշմիդտի, Էմիլի և
Պատկանեանի հետազոտութիւնները
ու քննութիւնները աւելի ևս հռչա-
կեցին այդ ընդհանուր և ոչ միայն
նեղ հայկական նշանակութիւն ունե-
ցող հեղինակի անունը, որի պատմու-
թիւնը, բայի ազգային հետաքրքրու-
թիւնից, ունի նաև կշիռ արեւելքի
պատմութեան համար։

Խորենացին՝ լինելով իրա դարու
ամենալուսաւոր զարգացած մտոր-
կանցից մինը, տեղեակ ժամա-
նակակից գիտութեան, փիլիսո-
փայութեան և գրականութեան, Ա-
թէնքի, Ազէքսանդրիայի և Բիւզան-
դիայի բարձր ուսումնարաններում
կատարելագործւած և շատ ճանա-
պարհորդած թէ օտար երկիրներում
և թէ իւր հայրենիքում, ուր նա եր-
կար տարիներ հալածւած էր և, իբրև
մուրացկան, շրջելով շփուել էր հայ
ժողովրդի հետ և ծանօթացել նորա
բանաւոր վիպական երգերի հետ, —
ունէր բոլոր պատրաստութիւնը զրի-
լու մի այնպիսի ծանր գործ, ինչպիսին
էր հայոց պատմութիւնը։ Համառօ-
տախօս, հակիրճ, ուժեղ ոճը, մաքիւր
խորութիւնը, գրական բազմաճմու-
թիւնը (эрудиция), նուրբ ճաշակը և
անկեղծ ու բարձր հայրենասիրու-
թիւնը ի միասին առած՝ տալիս են
նորա գրածքին մի այնպիսի վիհու-
թիւն, որ լատուկ է միայն լատին ու
չոյն կլասիկներին։

Եւ մեր պատմագոր ալդ ճշանա-
ւոր վատտակը մեռում էր հալ ընթեր-
ցող մեծամասնութեան համար ան-
մոռելիք, որովհետեւ մեծ զանազա-
նութիւն կալ V-րդ դարու և այժմեան
մեր դրականական լեզուի մէջ. Սա-
կալն հալ հասարակութիւնը սկսել է
զղալ պահանջ ծանօթանալու իւր ան-
ցեալի հետ: Այդ բնական պահանջը
լրացնելու միջոցներից մինն է՝ մաս-
շէկի անել ընթերցող մեծամասնու-
թեան մեր հին կլասիկները, որոնցից
առնանաճանաչորի՝ Խորենացու՝ հետ,
ինչպէս տեսնում էք, լանձն է առել
ծանօթացնել հ. Խորէն Ստեփանէն:
Նորա աշխատասիրութիւնը րացի
բնագրի թարգմանութիւնից ունի նաև
մի լուսաջարան, ծանօթութիւններ և
լուսւլածներ:

Յառաջաբանի մէջ հալոց պատ-
մութեան վերալ ձգած ընդհանուր
հայեացքի միտքը սկս է, որ հալ ազգը
միշտ ղուրկ է եղել աշխարհակալու-
թեան ձգտումից. խոփն ու արօրը,
վաճառականութիւնն ու արհեստը և-
ղել են հալի գերը: Հալատաճը բա-
ժանւած էր բազմաթիւ, համարեա
միմիանցից անկախ իշխանութիւն-
ների, որոնք սեպհականութիւն էին
առանձին նախարարական տոհմերի,
որ իրանց չարաբերութիւններով զէպի
կենդորոնական իշխանութիւնը նման
էին եւրոպական աւատական իշխան-
ների (ֆեոդալներին): Ստիպել բա-
ւականաչափ չի պարզւած, որ ալդ
դրութիւնը մի հալական առանձնա-
լատկութիւն չէր, որովհետեւ ամեն
ազգերի մէջ էլ «իշխանները արգելք
էին լինում և չէին կամենում են-
թարկել մի մեծ կենդորոնական իշ-

խանութեան»: Այլ բանը այն է, որ
ալդ աւատական դրութիւնից, որը
մի անցողական աստիճան էր և միւս
ազգերի քաղաքական զարգացման
մէջ, չը կարողացաւ հալ ազգը ղուրս
զալ. նա երկար ապրեց քաղաքու-
կան զարգացման ալդ հասակում և
չը կարողացաւ ալդ դրութիւնից
զուրս գալ և անցնել միապետական
չրջանին, որովհետեւ նորա ներքին
քաղաքական կազմակերպութեան
զարգանալուն միշտ խոչընդատ էին
հանդիսանում արտաքին անընդհատ
պատերազմները և արշաւանքները,
որոնք մեծ կապ ունէին Հալաս-
տանի աշխարհագրական զիրքի
հետ: Հալատաճը ալդ պալմանե-
րում չ'ունեցաւ մի շարք ղորեղ, ե-
ռանդոա թագաւորներ, որոնք, ոչն-
չացնելով հալոց աւատականութիւնը,
ի մի ձուլէին մանր-մուշը իշխանու-
թիւնները և մի հզօր միապետութիւն
ստեղծէին, որը միայն կարող էր դէմ
գնել ալեպիսի հզօր թշնամիներին,
որպիսիք էին երկու կողմից բաժան-
բաժան եղած Հալատաճը իրանց մէջ
ձմրող Բիւղանդիան ու Պարսկից միա-
պետութիւնները:

Ալդ աւատական ցեղերից չորսը
ուժեղ էին և մեծ ղեր էին կատարում
հալոց պատմութեան մէջ. դոքա են՝
Սիւնի, Բապրասունի, Արծրունի և
Մամիկոնեան իշխանները, որոնցից
միմիայն Մամիկոնեանները ունէին
ասպետական ոգի, և հանդիսանում
էին իբրեւ ազգի ընդհանուր շահերի
պաշտպան. միւս ցեղերը լոկ մտա-
ծում էին իրանց տոհմ բարձրացնե-
լու և իրանց ղլխին թագ ղնելու
մասին. մանաւանդ հասկան էին Բադ-

րատունիք, որոնք իրանց ղգուչ, խոհեմ վարուողութեամբ կամաց կամաց անագին հարստութեան ու հաւաքածների տէր դառան: Այս ցեղի՝ Մ-րդ դարու ներկայացուցիչներինք մինք, ցանկանալով իւր ցեղի զործերը անմահացնել, դիմում է Մովսէս Խորենացուն, որ նա զրի իւր տան պատմութիւնը: Ստեփանն Խորենացին, իւր լաջն աշխարհաւիտողութեամբ ու անկեղծ հալոնեասիրութեամբ հանդերձ, չէր կարող մի աղգպիսի նեղ նպատակով բաւականանալ՝ նա մանաւանդ, որ Բագրատունիք ոչինչ ոգեւորիչ, ասպետական գործեր արած չ'ունէին, և սկսում է գրել հաջոց պատմութիւնը:

Բառաջաբանում պատմում է

Խորենացին գրում է.

«Այս, ասէ, Հալկ գեղապատշաճ և անձնեալ, քաջագանգուր, խալտակն և հաստաբազուկ. սա ի մէջ սկալիցն քաջ և երևելի լեալ, ընդդիմակաց ամենեցուն, որք ամբառնալին զձեռն՝ միապետել ի վերայ ամենայն սկալիցն և դիւցազանց: Սա խորխտացեալ ամբարձ զձեռն ընդդէմ բռնաւորութեանն Բէլալ, ի տարածանել ազգի մարդկան ընդ լալնութիւն ամենայն երկրի ի մէջ բազմակոյտ սկալիցն, անհուն խօլաց և ուժաւորաց: Քանզի անգ մոլեգնեալ ալի իւրաքանչիւր սուր ի կող ընկերի իւրոյ ձգելով, ջանալին տիրել ի վերայ միմեանց, ուր պատահուեք ի դէպ ելանէին Բէլալ՝ բռնանալ ունել զամենայն երկիր»:

Խորենացու կենսագրութիւնը. համառօտ տեղեկութիւն է տրւում նորա ալ աշխատութիւնների ու Խորենացու մասին և զած եւրոպական գրականութեան վերայ առհասարակ: Թարգմանիչը աշխատել է, որ թարգմանութեան լեզուն, որչափ կարելի է, մօտ լինի բնագրին, պահպանելով պատմաճօր գեղեցիկ, աղդու, պարզ և համառօտախօս ոճը և մի և նոյն ժամանակ «նշտ հասկանալի, միշտ աշխարհաբար ու ժողովրդական» մնալ: Սակայն պէտք է ասել, որ ալեքան էլ չի աճողակ աղբորորը իրագործել, Հասկացողութիւն տալու համար թարգմանութեան լեզուի մասին, բերենք մի քանի կտոր բնագրից և նորա թարգմանութիւնը.

Թարգմանած է.

«Այս Հալկը, ասում է, գեղեցիկ և վալելչակազմ, խիստ զանգուր մագերով, զուարթ աչքերով և հաստաբազուկ էր. սա հսկաների մէջ քաջ և երևելի լինելով, ընդդիմանում էր ալն ամենքին, որոնք ձեռք էին բարձրացնում հսկաների և դիւցազների վերայ տիրապետելու համար: Սա խորխտաւորով ձեռք բարձրացրեց Բէլի բռնաւորութեան դէմ—երբ մարդկալին աղղը տարածում էր բոլոր երկրի լալնութեան վերայ—կատաղի ուժեղ (?) բազմաթիւ հսկաների մէջ:

«Որովհետեւ այս ժամանակ իւրաքանչիւր մարդ կատաղած կոխում էր սուրը իւր ընկերի կողը, աշխատելով մինը միւսին տիրելու. ալստեղ բաղդը յաջողում է Բէլին երկիրը նուաճելու և տիրելու»:

Մի ալ օրինակ խորենացուց.

«Քանզի խորհըն չաղագս Աստուծոյ և ճգնազգեցիկ լինել՝ գոյգ երկոցունց, իսկ նուաճել հաւանեցուցանողականաւ կամ բռնաւորականաւ բանիւ՝ առաւել էր թագաւորին շնորհ. քանզի ընդ հաւատոյն ոչ ինչ կասեցուցանէր զգարծն»:

Վերջին օրինակն էլ բերեմ.

«Եւ զանեղսն ի նմա (երկրին) զիւրածել ի գետոյն բերիւք. հանգիտակ կղզուոյ առաւորիւս առնէ, շուրջ պարունակելով և ընդ ամենայն հոսելով, տրոհմամբ երկոսասանից վտակաց»:

Թէ որքան «հեշտ հասկանալի, միշտ աշխարհաբար ու ժողովրդական» է և որչափ թարգմանութիւնը արտապարտում է խորհնացու կորովի, պերճ (ИЗЯЩНОСТЬ) և ոլորկ ոճը, թողնում ենք ընթերցողին եղրակայնելու:

Առանձին առանձին ոճեր և բաւերում էլ կան շատ խորթութիւնների՝ օրինակ, ո՞վ է աշխարհաբար ասում «արու աղալ»։ մենք գիտենք, որ «էգ տղալ» չի լինում և, ճիշդն ասած, խորհնացին էլ աղալէս չի ասել, ալ ահա նորա խօսքերը.

Թարգմանած է.

«Որովհետեւ Աստուծու մասին խորհելը և ճգնութեամբ կեանք վարելը հասարակաց էր ևրկուքին ևս, իսկ համոզական կամ ստիպողական խօսքով նուաճելում թագաւորը անլի ունեցաւ ազգեցութիւն, որովհետեւ հաւատի համիմատնա գործը չէր պակասեցնում»:

Թարգմանած է.

«Եւ այն երկրի մէջ չ'եղածները հեշտութեամբ լինում են գետի ընթացքով, որ կղզու նման պտղաբեր է դարձնում երկիրը, նորա շուրջը պատելով և ամեն կողմը հոսելով տասներկու ջրանցքների օգնութեամբ ¹⁾»:

«Ջնջելով գամենայն արու՝ չերիտասարդաց մինչև ցատընդեսսլ, բաց ի միտ աղալու, զոր առեալ մտերիմ տան նորա» և այլն:

Իսկ թարգմանած է.

«Ջնջելով բոլոր արու տղաներին (?)», երկտասարդներից սկսած մինչև կաթ ուտող երեխաները, բացի մի տղալից, որին առնելով նորա տան մտերիմ» և այլն (Երես 193):

Մինչդեռ же мѹдрствѹя лѹхаво կարելի էր թարգմանել.

«Ջնջելով բոլոր արուների՝ երկտասարդներից սկսած մինչև կաթ

¹⁾ Ի՞նչը այսպէս է թարգմանել այս կտորը. «Что почва не въ состояніи производить, обильно приносить рѣка, которая, будучи раздѣлена на двѣнадцать канавовъ, образуетъ изъ этой страны плодороднѣйшій островъ, окружая его и протекая по всѣмъ направленіямъ».

ուսող երեխաները, բացի մի աղա-
վից, և ակն:

Գրքի վերջում բաւական մեծ տեղ են բռնում (328 երևս) խորենա-
ցու պատմութեան զանազան կէտերը
լուսաբանող ծանօթութիւնները, քա-
ղած գլխաւորապէս Էմինից ու Լանդ-
լուալից, և լաւելաւորները: Յալտնի է,
որ խորենացու պատմութիւնը հասել է
մեզ երեք գրքով, բաւց կարծում են,
որ չորրորդն էլ է եղել: Ահա աղ կարծ-
ւած չորրորդից բերւած է իբրեւ լա-
ւելւած մի գլուխ՝ «Տրդատ Թաղաւո-
րի սպանութիւնն ու Թաղումն»: Բացի
ալը, կան և հետեւեալ լաւելւածները:
Հին Հայաստանի համառօտ աշխար-
հացոյցը, ժամանակագրական ցու-
ցակը, Քսենոֆոնի կիրառելիքի մի
կտոր և քաղաածք Բիսութուն գիւղի
(Համադանի մօտ) բնեռագիր արձա-
նագրութիւններից, որ մեկնել են
կոմս Գօթինօն և Ռաուլինսըն: Այդ
արձանագրութիւնները ազօտ լոյս են
սփռում Գարեհ Ա.-ի ժամանակաշ-
հայցը պատմութեան վերալ:

Թարգմանիչը ունի ուրույն ուղղա-
գրութիւն. նա վրդովօղ, վիճօղ, կարօղ և
ակն, օ է գրում, իսկ լաջող, Ասողիկ
և ակն ու Թէ ինչ դիւրութիւն է
մտցնում գրողների համար ալը նո-

րաձնութիւնը. չը կարողացանք
հասկանալ:

Այսպիսով հ. Ստեփանէի ալս աշ-
խատութիւնը իւր մէջ պարունա-
կում է ալն բոլոր նիւթերը, որ հար-
կաւոր ևն խորենացու պատմութիւնը
ուսումնասիրելու համար: Ընթերցողը
կարող է լիակատար դաշնափար կադ-
մէլ խորենացու վերալ եղած գիտա-
կան զրականութեան, քննութիւնների
և ծագած խնդիրների մասին: Եթէ
բնագրի Թարգմանութիւնը կատար-
ւած լինէր աւելի պարզ, հասկանալի
և ողորկ աշխարհաբար լեզուով և
ունենար բնագրի գեղարուեստա-
կան ոճը, նա նաւաւել մեծ զրական
արժէք կ'ունենար: Այնու ամենալ-
նիւ, ալս աշխատութիւնը հասնում
է իւր նպատակին—միջոց տալ հային
ծանօթանալ, ուսումնասիրել իւր
ազգի անցեալը: Պաշտօնեանի պատ-
մութիւնը, որ սրուի է տպագրել
Հալերէն. Գրքերի Հրատարակութեան
Ընկերութիւնը, հ. Ստեփանէի աշխա-
տասիրութեան հետ միասին կարող
կը լինին լալանի չափով բաւականու-
թիւն տալ հալ նոր սերնդի բնական
պահանջին՝ ծանօթանալ իւր ազգի
անցեալի հետ:

Լ. Ս.

Ե. Մ. ՓԱԻՍՏՈՍ ԲՈՒՋԱՆԴ. Վիեննա, տպ. Մխիթարեան,
1890 թ., փոքր քառաձուլ, V+52 երես, տառ. № 10: Գինն է
50 կոպէկ:

Պարոն Եղիշէ Մաղաթեանը նոր
չէ գրում Փաւստոսի մասին: Մի
քանի տարի առաջ նա նւիրեց «Ար-

ձագանք» չաբաթաթերթում մի լող-
ւած, որի հիմնական կէտերը գտնում
ենք. նաև ալս գրքուկի մէջ. Այս աշ-